

«29» 06



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մշակութային ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, որը ապահովում է մշակույթի, գեղարվեստական կրթության և հրատարակչական ոլորտների (այսուհետ՝ «Ոլորտներ») ծրագրերի, առանձին միջոցառումների և տարբեր տեսակի ուսումնասիրությունների ու մոնիթորինգների, ֆինանսական կանխատեսումների, ծրագրերի իրականացման ու արդյունքների ամփոփման աշխատանքները, Ոլորտների պետական քաղաքականության վերլուծությունը, միտումների ու օրինաչափությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև Ոլորտների կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի ու կարգերի բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի (այսուհետ՝ Նախարարի) հրամաններով:

3. Վարչության կանոնադրությունը, կառուցվածքը հաստատում (փոփոխում) է Նախարարը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության խնդիրներն են.

1) Ոլորտների նպատակային ծրագրերի, ռազմավարությունների, հայեցակարգերի, միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման ծրագրերի մշակումը և դրանց մոնիթորինգի իրականացումը.

2) Ոլորտի գիտատեխնիկական զարգացման ուղղությունների սահմանումը.

3) Ոլորտում վարչական վիճակագրական հաշվետվությունների ստեղծումը, ներդնումը և համապատասխան գրանցամատյանների վարումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Վարչությունը ապահովում է Ոլորտների ռազմավարական, միջնաժամկետ ու տարեկան զարգացման բյուջետային ծրագրերի, Նախարարության գործունեության տարեկան ծրագրի, նպատակային ծրագրերի մշակումը, մոնիթորինգների կազմակերպման ու գնահատման համար անհրաժեշտ հայեցակարգերի, մեթոդական նյութերի, ուղեցույցերի, հաշվետվության ձևերի, տարբեր չափանիշների /նորմատիվների/ ու չափորոշիչների մշակումը և դրանց տեղայնացումը:

2) Վարչությունը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի, կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ), հակակոռուպցիոն ռազմավարության, միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ), ՀՀ մի շարք այլ ռազմավարական փաստաթղթերի Նախարարությանն առնչվող հատվածների մշակման և ամփոփման աշխատանքները:

3) Կազմակերպում է Վարչության օժանդակությունը Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներին ու Նախարարության ենթակայության կազմակերպություններին Ոլորտների հայեցակարգային փաստաթղթերի, ռազմավարական միջնաժամկետ ու տարեկան զարգացման բյուջետային ծրագրերի